# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից ներկայացված՝ Գեղանուշ գետի տեղափոխման թունելի վերանորոգման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ լսում)**

14.07.2026թ Կապանի համայնքապետարան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2026թ. հուլիսի 14-ին՝ ժամը 12:00-ին Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղանուշ գետի տեղափոխման թունելի վերանորոգման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետներ Գոհար Մինասյանը և Հովիկ Մեսրոպյանը, Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Գոռ Թադևոսյանը, «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի բնապահպանության բաժնի պետ Աիդա Ալեքսանյանը, համայնքապետարանի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Գոռ Թադևոսյանը ներկայացրեց, որ հանրային լսումը վերաբերում է «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Գեղանուշ գետի տեղափոխման թունելի վերանորոգման աշխատանքներին, որ համայնքին պատշաճ կերպով հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է, որ հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը փակցվել է համայնքապետարանի շենքում, բնակիչները պատշաճ կերպով իրազեկվել են, ապա զեկույցի համար խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանին, ով վարեց հանրային լսումը, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 40 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին՝ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին՝ լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում: Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, մեղմող միջոցառումները, մշտադիտարկումները:

Գոհար Մինասյանն անդրադարձավ մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներին, մշտադիտարկումներին: Ներկայացրեց, որ անհրաժեշտ է աշխատանքներն իրականացնել այնպես, որպեսզի չառաջանա ջրային հոսքի խոչնդոտում կամ շեղում, գետի աղտոտում կամ կեղտաջրերի արտանետում, ինչպես նաև գետի հատակի, ափերի հոսքի, հատկությունների փոփոխություն, քանի որ ըստ ջրային օրենսգրքի վերոնշյալ փոփոխությունները հանդիսանում են ջրօգտագործում և ցանկացած տեսակի ջրօգտագործման համար անհրաժեշտ է դիմել շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար, ինչին Աիդա Ալեքսանյանը պատասխանեց, որ ջրօգտագործում անհրաժեշտ է լինելու միայն ջրցան իրականացնելու համար, անհրաժեշտ ջուրը բերվելու է ջրցան տեխնիկայով՝ «Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ-ի գործող ջրօգտագործման թույլտվության սահմաններում: Գործունեության իրականացման ընթացքում նոր տարածքներ չեն խախտվելու, իրականացվելու են միայն թունելի վերանորոգման աշխատանքներ:

Գոհար Մինասյանը բնապահպանական միջոցառումների համար նախատեսված գումարի վերաբերյալ հարցում կատարեց, ինչը պարզաբանվեց Աիդա Ալեքսանյանի կողմից:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից ներկայացված՝ Գեղանուշ գետի տեղափոխման թունելի վերանորոգման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

«Կապանի Լեռնահարստացման Կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Դավիթ Դանիելյան